

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոմպարկետ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/133 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում  
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>"Նշված բոլոր ապրանքները /200 պայուսակ, որոնցից յուրաքանչյուրում դասավորված կլինեն բոլոր 8 անուն գրենական ապրանքները՝ նշված քանակներին համապատասխան/ մատակարարի կողմից կմատակարարվեն պատվիրատուին՝ որակյալ, նոր և չօգտագործված վիճակում: Մասնակցի կողմից կներկայացվեն ապրանքային նշան, ֆիրմային անվանում և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն: Փաթեթի գինը իր մեջ ներառում է ապրանքների առաքումը պատվիրատուի հասցե: Փաթեթների բեռնաթափումը և մատակարարումը նշված հասցե կկատարվի մատակարարի կողմից: Տեսականին նախապես կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքները ենթակա են ետ վերադարձման: ՊԱՅՈՒՍԱԿ - Դպրոցականի պայուսակ՝ բաժանված նվազագույնը 3 դարակների, 2-5-րդ դասարաններում սովորող տղաների և աղջիկների համար: Պայուսակի ներսում նախատեսված կլինի շղթայով գրպանիկ՝ մանր իրերի համար, որի նվազագույն երկրաչափական չափսերն են 15x20սմ, շղթան և շղթայի գլխիկը կլինի մետաղական: Պատրաստված բարձրորակ, չթրջվող կտորից, Էկոլոգիապես մաքուր, ամուր, խիտ հումքից, /100% պոլիէստեր, պատվիրատուի պահանջով ներկայացվի սերտիֆիկատ՝ Էկոլոգիապես մաքուր հումքի վերաբերյալ/, գերծ տարատեսակ քիմիական ներկանյութերի հոտերից, մեջքի հատվածում՝ օրթոպեդիկ կառուցվածքով, անհրաժեշտության դեպքում ներկայացվի համապատասխան սերտիֆիկատ օրթոպեդիկ կառուցվածքի վերաբերյալ: Պայուսակի դարակների փականի՝ շղթայի /ցեպի/ գլխիկը լինի մետաղական: Երկրաչափական չափսերը՝ առնվազն 20սմx35սմx45սմ: Պայուսակի առջևի մասում նախատեսված լինի շղթայով դարակ նվազագույնը 30x30սմ երկրաչափական</p>

չափսերով: Պայուսակի աջ և ձախ կողքերին լինեն հատուկ տեղեր նախատեսված շշով հեղուկի համար, ինչպես նաև լինեն կապիչներ /լիպուլչկա/ հեղուկի շիշը իրենց տեղերում ամրացնելու համար: Պայուսակի վրա նախատեսված լինի ձեռքով բռնելու հարմարավետ վերև բարձրացող բռնակ, ինչպես նաև փոքր բռնակ դպրոցական սեղանի կախիչից կախելու համար, ուսերին կրելու հնարավորություն ուսագոտիների տեսքով, որոնց երկարությունը հնարավոր լինի կառավարել: Ուսագոտիներում լինեն օգտագործված հատուկ հարմարավետ փափուկ ներդիրներ: Պայուսակները չունենան կպչուն ժապավեններով ամրակներ (լիպուլչկա), այլ օգտագործվեն էկոլոգիապես մաքուր նյութերից պատրաստված պլաստմասսե առաձգական մեծ ամրությամբ օժտված ամրակներ, նաև ֆիքսող հատկությամբ: Պայուսակի ներքևի մասում լինի պլաստմասսե 4 ոտիկ: Պայուսակի մեջքի, հատակի և առջևի հատվածները ունենան չճկվող ամուր ներդիրներ: Տղաների պայուսակների գերակշռող գույնը՝ կապույտ, սև կամ մոխրագույն: Աղջիկների պայուսակների գերակշռող գույնը լինի վարդագույն և մանուշակագույն: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՏՐ 48 ԹԵՐԹԱՆԻ - 8 ՀԱՏ /4 հատ տողանի և 4հատ վանդակավոր/ նկարագարող, լուսանցքները՝ աջ և ձախ կողմերը կարմիր գույնով գծված: Տետրի կազմի վրա լինեն տողեր նախատեսված աշակերտի տվյալները լրացնելու համար, չափսը՝ 17x20 սմ: ԳՐԻՉ - 5ՀԱՏ՝ կարմիր և կապույտ գույնի /կապույտ գույնից 3 հատ, կարմիր գույնից 2հատ/, գրիչի երկարությունը՝ առնվազն 13-14սմ, ռետինե կամ սիլիկոնե բռնակով, առնվազն 07մմ սայրով, պատրաստված էկոլոգիապես մաքուր հումքից: Պատվիրատուի պահանջով ներկայացվի սերտիֆիկատ՝ էկոլոգիապես մաքուր հումքի վերաբերյալ: Սրիչ-Սրիչ՝ 1 հատ աղբամանը շարժական կափարիչով, առնվազն 2 բնիկով՝ լայն և նեղ, պլաստմասսայե, պատրաստված էկոլոգիապես մաքուր հումքից: Պատվիրատուի պահանջով ներկայացվի սերտիֆիկատ՝ էկոլոգիապես մաքուր հումքի վերաբերյալ: Քանոն - 1 հատ փայտե, ուղիղ գծաբաժանումներով, հարթ եզրերով, լավ մշակված և հղկված, թեթև լաքապատ, երկկողմանի գծանշումներով, գծանշումների մակերեսը ուռուցիկ, երկարությունը՝ առնվազն 30 սմ Ռետին -1 հատ սև գույնի, չափսերը՝ նվազագույնը 4x3x1,5սմ, էկոլոգիապես մաքուր ու փափուկ հումքից պատրաստված, յուրաքանչյուրը փաթեթավորված: Պատվիրատուի պահանջով ներկայացվի սերտիֆիկատ՝ էկոլոգիապես մաքուր հումքի վերաբերյալ: Նկարչական ալբոմ - 1 հատ առնվազն 32 թերթ, հաստ սովորաթղթե կազմով, Կազմը և նկարչական թղթերը ամրացված գալարով: Նկարչական ալբոմի թղթերը պատրաստված լինեն նվազագույնը 90գրամանոց թղթերից: Գունավոր մատիտներ - 1 տուփ նվազագույնը 24 գույն /ոչ երկկողմանի/, 6 անկյուն կամ եռանկյուն կտրվածքով: Մատիտների տուփը լինի հաստ սովորաթղթից կամ պլաստմասսե, մատիտների երկարությունը՝ նվազագույնը 18սմ, փափկությունը՝ HB, պատրաստված էկոլոգիապես մաքուր հումքից: Պատվիրատուի պահանջով ներկայացվի սերտիֆիկատ՝ էկոլոգիապես մաքուր հումքի վերաբերյալ: Գրչատուփ - 1հատ Պատրաստված լինի չճկվող ամուր հումքից: Բացվի գրքաձև՝ 180աստիճան, փականը /ցեպ/ և գլխիկը լինեն մետաղյա: Երկրաչափական

չափսերը՝ երկարությունը նվազագույնը 20սմ, լայնությունը՝ նվազագույնը 12սմ, բարձրությունը նվազագույնը 2.5սմ:  
Գրչատուփի բացված կողմերի վրա ներսից կարված լինեն ռեզինե ժապավեններ՝ բաժանարարներով,  
նախատեսված գրիչների, մատիտների, ռետինի, մկրատի, սրիչի և այլ գրենական պիտույքները ամրացնելու և  
տեղավորելու համար: Պատրաստված էկոլոգիապես մաքուր, ամուր, որակով հումքից, Պատվիրատուի պահանջով  
ներկայացվի սերտիֆիկատ՝ էկոլոգիապես մաքուր



## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

Չմխմարդն ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵԲ-ԷԱՃԱՊՁԲ-23/133 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	